«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՌԵԿՏՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ
Հ. Ս. ՉԱՔՈՅԱՆ
13 հունվար, 2025թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Գարրի Գարիկի Գասպարյանի «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի, **Ագրարային էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնների** 2025 թվականի հունվարի 13-ին (արձանագրություն թիվ 7) կայացած համատեղ նիստում, մասնակցությամբ՝ դոցենտներ Հ. Վ. Հովհանիսյանի, Ա. Հ. Հարությունյանի, Ս. Վ. Մելոյանի, Ա. Գ. Մատինյանի, Ա. Ս. Շահբազյանի, Ծ. Բ. Խալաթյանի, դասախոսներ՝ Մ. Է. Հովհաննիսյանի, Ա. Վ. Ղազարյանի, Հ. Գ. Գևորգյանի, ասիստենտներ՝ Հ. Հ. Գրիգորյանի, Լ. Հ. Ծպնեցյանի, Ն. Յ. Սարգսյանի, Լ. Ա. Վարդանյանի:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին ժամանակներում մարդկությունը առերեսվում է էկոլոգիական բարդ և բազում մարտահրավերների, որոնց առաջացման առանցքային գործոնը հասարակության՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող տնտեսական գործունեությունն է: Տնտեսական գործունեության բարեփոխման և էկոլոգիական խնդիրների լուծման կարևորության ու հրատապության գիտակցումը այժմ ստացել է գլոբալ բնույթ, ինչը միանգամայն բնական է, քանի որ դրանց անտեսումն ու հետագա սրացումները կարող են հանգեցնել էկոլոգիական, սոցիալական աղետների և տնտեսական ճգնաժամերի: Աշխարհում արդեն ամրապնդվում է այն գաղափարը, որ տնտեսական արտադրահարաբերությունների էկոլոգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը ոչ միայն չի խոչընդոտում, այլ սովորաբար նպաստում է

տնտեսության զարգացմանը՝ հնարավորություններ ստեղծելով հասարակության կայուն զարգացման ապահովման համար:

Ներկայումս էկոլոգիական ամենասուր ու ռիսկային հիմնախնդիրներից է համարվում մթնոլորտային օդի աղտոտումը, որը կլիմայի գլոբալ փոփոխության, հանրային առողջության վատթարացման ու բարեկեցության անկման, և, ընդհանրապես, շրջակա միջավայրի քայքայման պատճառ է հանդիսանում:

Մթնոլորտային օդի պահպանության խնդիրը բավականին սուր կերպով է արտահայտված նաև ՀՀ-ում, հետևաբար էկոլոգիական այդօրինակ հիմնախնդրի լուծմանն ուղղված կառուցակարգերի արդյունավետության բարձրացման միջոցառումների իրականացումը պայմանավորում է ՀՀ-ի կայուն զարգացման ապահովման հնարավորությունը: Այդպիսի կառուցակարգերից առանցքային դերակատարում ունի մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգը, որի գործադրման արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակումն ու իրագործումը պահանջում են ազգային տնտեսական կառուցակարգի հիմնախնդիրների, դրանց էկոլոգատնտեսական հետևանքների և վերացման ուղիների, ինչպես նաև կառուցակարգի կատարելագործման հնարավորությունների համակողմանի ուսումնասիրություն: Ուստի, տվյալ ուղղությամբ գիտական քննարկումները դառնում են խիստ հրատապ, որի անհրաժեշտությունն էլ պայմանավորել է սույն ատենախոսության թեմայի արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի առկա հիմնախնիրների բացահայտումն ու դրանց լուծման հնարավոր ուղիների առաջադրումն է:

Նշված նպատակին հասնելու համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի տեսամեթոդական հիմունքներն ու առանձնահատկությունները մթնոլորտային օդի պահպանության համատեքստում,
- վերլուծել և հետազոտել մթնոլորտային օդի պահպանության տնտեսական գործիքակազմն ու դրա կիրարկման միջազգային փորձը,
- ուսումնասիրել մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգը և գնահատել դրա ապահոված էկոլոգատնտեսական արդյունքները,
- գնահատել ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների և տնտեսության զարգացման միջև փոխկապվածությունները,

- բացահայտել ավտոտրանսպորտային արտանետումների կարգավորման տնտեսական կառուցակարգի անկատարություններն ու մատնանշել դրանց վերացման հնարավոր ուղիներն ու կառուցակարգի բարեփոխման հնարավորությունները,
- անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումների կրճատում ապահովելու նպատակով առաջադրել գործադրվող տնտեսական կառուցակարգի կատարելագործման ճանապարհային քարտեզը և ուրվագծել կառուցակարգի զարգացման առաջնահերթությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների վրա տնտեսական զարգացման ազդեցությունների գնահատման արդյունքում բացահայտել ենք ՀՆԱ-ի և մթնոլորտային օդ արտանետումների միջև առկա փոխառնչությունները:
- Բացահայտելով ավտոտրանսպորտային միջոցներից մթնոլորտային օդ վնասակար նյութեր արտանետողների հարկման մեթոդաբանական և համակարգային խնդիրներ՝ առաջադրել ենք էկոլոգիական գործոնը արդյունավետորեն հաշվառող բնապահպանական հարկման նոր մոտեցումներ:
- Հիմնավորելով աղտոտման անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդ արտանետումների կարգավորման տնտեսական կառուցակարգի արդյունավետության բարձրացման հարկավորությունը՝ առաջարկել ենք դրա գործիքակազմի կատարելագործման առաջնահերթ քայլերը և մշակել համալրման գիտափորձնական ժամանակակից մոտեցում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ***«Ներածություն»*** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության հիմնական նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ատենախոսության արդյունքների գիտական և գործնական կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին՝ ***«Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի***

տեսամեթոդաբանական հիմնահարցերը» գլխում ներկայացվել են շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործադրվող տնտեսական կառուցակարգի էությունը, դերն ու առանձնահատկությունները, ընձեռած առավելություններն ու հնարավորությունները մթնոլորտային օդի պահպանության համատեքստում: Այս գլխում անդրադարձ է կատարվել նաև մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի գործիքակազմին ու դրա կիրարկման միջազգային փորձին:

Ատենախոսության երկրորդ՝ ***«ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության գործող տնտեսական կառուցակարգը և դրա արդյունավետության գնահատումը»*** գլխում վերլուծվել է մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգը, դիտարկվել են մթնոլորտային օդ արտանետումների շարժընթացները և դրանք պայմանավորող հիմնական գործոնները, հասարակության բավարարվածության մակարդակը մթնոլորտային օդի որակով, զննության են առնվել բնապահպանական միջոցառումների պետական ֆինանսավորման իրավական կարգավորումն ու ծավալները, ներկայացվել է մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված նյութական խրախուսման ազգային փորձը և դրա ապահոված արդյունքները: Նաև գնահատվել են ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների և տնտեսության զարգացման միջև փոխկապվածությունները:

Ատենախոսության երրորդ՝ ***«Մթնոլորտային օդի պահպանության տնտեսական կառուցակարգի բարեփոխման գերակայությունները ՀՀ-ում»*** գլխում ներկայացվել են մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի հիմնախնդիրները, ինչպես նաև ուրվագծվել են մթնոլորտային օդի պահպանության գործող տնտեսական կառուցակարգի զարգացման առաջնահերթությունները և վերջիններիս հիման վրա առաջարկվել մթնոլորտային օդի պահպանության ազգային տնտեսական կառուցակարգի կատարելագործման ու զարգացման ուղիները:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ չէ որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Աշխատանքում բացակայում են գնային քաղաքականության մշակման բնագավառում նորագույն տեխնոլոգիաների կիրառման ուսումնասիրությունները: Զարգացած երկրները որդեգրել են մինչև 2050 թվականը ածխածնային արտանետումները 0-ականի հասցնելու քաղաքականություն: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետությունը ևս քայլեր է ձեռնարկում՝ միանալու Եվրամիության երկրների ստանձնած նշված քաղաքականությանը:

2. Ատենախոսությունում ոլորտում գործող վերահսկման ինստիտուտների աշխատանքների, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրական դաշտի վերլուծությունը կարելի էր իրականացնել ավելի խորքային, մասնավորապես, առկա օրենքի («Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը) պահանջների կատարումը և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Փորձաքննություն ՊՈԱԿ-ի գործունեությունը, որից աշխատանքը միայն կշահեր:

3. Ատենախոսության մեջ ատենախոսի ձևակերպած «ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների վրա տնտեսական զարգացման ազդեցությունների գնահատման արդյունքում բացահայտել ենք ՀՆԱ-ի և մթնոլորտային օդ արտանետումների միջև առկա փոխառնչությունները» գիտական նորույթը կարիք ունի վերաշարադրման, մասնավորապես. «ՀՀ-ում մթնոլորտային արտանետումների վրա տնտեսական զարգացման ազդեցությունների գնահատման արդյունքում առաջին անգամ բացահայտվել են ՀՆԱ-ի և մթնոլորտային օդ արտանետումների միջև առկա փոխառնչությունները՝ հիմնվելով վիճակագրական և էկոնոմետրիկ վերլուծությունների վրա, ինչը կարող է ծառայել որպես տվյալ ոլորտի քաղաքականության բարելավման հիմք», որն ավելի ճիշտ մոտեցում է և հստակ է ներկայացնում նորույթի էությունը:

4. «ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բաժնում նշվում է, որ աշխարհում ձևավորվել է բազմաբաղադրիչ գործիքակազմ, սակայն միաժամանակ նշվում է, որ չկա «ամենազոր» գործիք, ինչը բացասում է այն, որ արդեն գոյություն ունի բավարար արդյունավետ գործիքակազմ: Անհրաժեշտ է հստակեցնել՝ արդյո՞ք առաջարկվող բազմաբաղադրիչ մոտեցումը կիրառվում է ՀՀ-ում և եթե կիրառվում է, ապա որոնք են արդյունքները, թե՞ ներկայացված է միայն տեսական դրույթի մակարդակով :

5. Առաջարկները հիմնականում կրում են ընդհանրական բնույթ, մասնավորապես՝ չկան հաշվարկներով հիմնավորված առաջարկներ, թե կոնկրետ միջոցառումների կիրառման արդյունքում որքանով կնվազի շրջակա միջավայրի աղտոտումը:

6. Աշխատանքի 2.1 ենթագլխում հեղինակը նշում է, որ ավտոտրանսպորտային հարկային արտոնությունների կիրառումը նպաստել է էլեկտրամոբիլների թվի աճին, սակայն չի նշվում, թե դա ինչ չափով է ազդել արտանետումների կրճատման վրա:

Ընդհանուր առմամբ, ատենախոսության թեման և առաջադրված գիտական նորույթները հիմնավորված են ՀՀ արդիական էկոլոգատնտեսական խնդիրներով ու միջազգային փորձի լավագույն օրինակներով: Առաջարկվող տնտեսական լուծումները ոչ միայն նորարարական են, այլև իրատեսական՝ հաշվի առնելով տեղական և միջազգային փորձը: Հետևողական իրականացման

դեպքում կարող են զգալիորեն բարելավել ՀՀ-ի էկոլոգիական իրավիճակն ու նպաստել կայուն զարգացման նպատակների իրականացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գարրի Գարիկի Գասպարյանի «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Թեկնածուական ատենախոսության շրջանակներում ստացված արդյունքները և դրանում ներկայացված առաջարկությունները կարող են ծառայել ՀՀ-ում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի զարգացման հիմնախնդիրների լուծմանը:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրատարակված 8 (ութ) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին ու ունեն բավարար ընդգրկունություն:

Գարրի Գարիկի Գասպարյանի «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում տնտեսական կառուցակարգի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության եւ դրան համատեղ կազմված սեղմնագիրն ու թվով 8 (ութ) գիտական հոդվածների հրապարակումները համապատասխանում են ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կարգի 6-րդ եւ 7-րդ կետերին, ինչպես նաեւ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ աշխատանքի հեղինակը արժանի է Ը. 00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն եւ կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի՝ որպես առաջատար կազմակերպության, միջամբիոնային նիստում (13.01.2025թ.):

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ
ՊՐՈՌԵԿՏՈՐ՝ ԾՊՆԵՑՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԵՐԳԵՅԻ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՍՄԻԿ ՎԱՂԻՆԱԿԻ
տ.գ.թ. , դոցենտ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀՐԱՉՅԱ ՀԱՅԿԱԶԻ
տ.գ.թ.

ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԱՆ ՀԱՄԼԵՏԻ
տ.գ.թ., դոցենտ

ՀԱԱՀ-ի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ծպնեցյան Հրաչյա Սերգեյի, նույն համալսարանի Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար տ.գ.թ., դոցենտ Հովհաննիսյան Հասմիկ Վաղինակի, նույն ֆակուլտետի Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար տ.գ.թ. Հրաչյա Հայկազի Գրիգորյանի, նույն ֆակուլտետի Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի վարիչ տ.գ.թ., դոցենտ Հարությունյան Արման Համլետի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՎԱԳՅԱՆ ԳԱՅԱՆԵ
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու.
դոցենտ

13.01.2025 թ

Ընդհանուր բաժին
Общий отдел
General department